

ՏԱՍՆ ԵՒ ԶՈՐՐՈՐԻ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 բուբլ, կես տարվանը 6 բուբլ: Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисе. Редакция «Мшакъ». Կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Քրիստոնէութեան ամենամեծ տօնը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պաշտօնական տեղեկութիւն. Նա մակ Երևանից. Ներքին Լուրեր.— ՀԵՌՈՒՄՈՒՄՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Մասնագրութիւն:

ՔՐԻՍՏՈՆԵՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՄԵՐ ՏՕՆԸ

Այս շաբաթվայ ընթացքում ամբողջ քրիստոնէական քաղաքակիրթ աշխարհը տօնում է քրիստոնէութեան ամենամեծ տօնը, այն է Քրիստոսի յարութիւն առնելը: Շատ դարեր առաջ հրէական ազգը երկրպետում դերութեան մէջ ընկած, ազատվում է գերութիւնից Մովսէսի ձեռքով, նրա առաջնորդութեամբ վերագաղտում է իր հայրենիքը, ստանում է նրա ձեռքից նոր օրէնքներ, որոնց միջոցով վերանորոգվում է բարոյական է քաղաքականացան: Հրէական ազգի պատմական այդ ժամանակաշրջանը նրա գոյութեան ամենափառաւոր րօպէն էր: Մի ազգ որ ընդունում է իր միջից դուրս եկած, իր մէջ յայտնվող վերանորոգչի բոլոր գաղափարները, այդ տեսակ ազգ ստանում է աւելի մեծ ոյժ, զարգացման աւելի մեծ նշանակութիւն:

Հրէական ազգը չէր հալածեց Մովսէսին, չէր մերժեց նրա վերանորոգչութիւնները, նրա ղեկավարները, այլ խոնարհից այդ վերանորոգչութիւնների անհրաժեշտութեան առջև.— և դրա համար էլ ազգը վարձատրվեցաւ. նա դարձաւ աւելի ուժեղ, աւելի զարգացած, երկիրը ծաղկած գրութիւն ստացաւ մեծ վերանորոգչի իրան շնորհված և ազգի կողմից ընդունված նոր օրէնքների պատճառով:

Բայց անցան դարեր: Մովսէսի օրէնքները, ինչքան նպատակայարմար էին իրանց ժամանակին, հնացել էին արդէն: Ազգին հարկաւոր էր մի նոր կեանք, մի նոր, թաւրբ բարոյական հոսանք, հարկաւոր էին նոր բարոյական իդէալներ, հարկաւոր էր

հասարակական և եկեղեցական մի գործը ղեկավար, արմատական վերանորոգչութիւն: Եւ ահա 1886 տարի սրանից առաջ մովսէսական հրէականութեան մէջ յայտնվում է մի նոր, գործող, Մովսէսից աւելի հանձարեղ վերանորոգչիչ Յիսուսը, որ հասկանալով ազգի եղած հին օրէնքների, նրա հնացած հասարակական կազմակերպութեան անժամանակակից լինելը, յայտնում է ազգին թէ եկել է ոչ թէ «հին օրէնքը քանդելու», այլ նրան լրացնելու: Եւ ահա նա յայտնում է ազգին իր սիրելի, ներդրամութեան և հաւասարութեան մեծ վարդապետութիւնը:

Բայց հրէաները փոխանակ նրան էլ վերաբերվելու այնպէս, ինչպէս վերաբերվելին Մովսէսին, փոխանակ ընդունելու նրա նոր վարդապետութիւնը, փոխանակ հասկանալու թէ մովսէսականութիւնը, ինչքան էլ լուր էր իր ժամանակին, բայց դարերի ընթացքում անարժ մնալով և ոչ մի նոր միտք իր մէջ չընդունելով հնացել էր և կարող էր արմատական վերանորոգչութեան սկսեցին կատարելութեամբ հալածել նոր վարդապետութիւնը, մերժեցին վերանորոգչութիւնը, սկսեցին ծաղրել, հալածել և ջարջարել վերանորոգչին և վերջը խաչեցին նրան:

Մի ազգ, որ չէ ուզում ընդունել իր միջից յայտնվող վերանորոգչութիւնը, իր շքեր միջից դուրս եկած նոր գաղափարը, որը պետք է իրան նոր կեանք պարգևէր մի ազգ, որ անպայման պաշտպանում է միմիայն կոյր աւանդութեան զգացմունքից զրոգած եղած հինը և մերժում է իր միջից յայտնվող նոր, կենսատու, վերանորոգչ ժամանակակից գաղափարի անհրաժեշտութիւնը.— այդ տեսակ ազգ միշտ պատժվում է: Այդպէս պատժվեցաւ և հրէական ազգը իր մեծ վերանորոգչին հալածելու, չարչարելու և խաչելու պատճառով: Հինը այլ ևս անկարող էր հասարակական քաղաքակիրթ կազմուածքը պահպանել, նորն էլ կատարելութեամբ և կոյր թշնամութեամբ մերժվեցաւ հրէական ազգից.— և ազգը պատժվեց:

նա ուզեց անպայման յամուել հինի մէջ, անշարժութեան մէջ և ինքն քայքայվելով, լուծվելով, որպէս հասարակական օրգանական մարմին, նրա անդամները կորցրին իրանց կապող հասարակական կապերը և ցրուեցին ամբողջ երկրագնդի երեսի վրա: Մարդկային հասարակութիւնը միշտ պատժվում է, երբ չէ կամենում ընդունել, սեփականել իր միջից յայտնվող ժամանակակից նոր իդէալները, նոր գաղափարները և կոյր, անգիտակցական, աւանդական ներհայեացի զգացմունքով առաջնորդվելով, ուզում է արուեստական կերպով անպայման պահպանել արդէն հնացած, անպէտք դարձած, շուշ և հողի կորցրած անժամանակակից հնութիւնը:

Հրէականութիւնը, որ մի ժամանակ ընդունեց, իրացրեց իր միջից յայտնված մովսէսականութիւնը, այն ժամանակ նոր ոյժ, նոր կեանք ստացաւ, կենդանացաւ: Նոյն հրէականութիւնը, որ մի քանի դարերից յետոյ չուզեց իրացնել, չուզեց ընդունել դարձաւ իր միջից յայտնված քրիստոնէութիւնը, պատժվեցաւ իր հասարակականութեան ընթացքը համար: Հրէականութիւնը մերժելով, իրանից յետ մղելով նոր վարդապետութիւնը, համոզված էր թէ կարող է շարունակել ապրել մովսէսականութեան մէջ, համոզված էր, թէ մեռցրեց քրիստոնէութիւնը, խաչելով նրա հեղինակին.— բայց պատմութեան աւնորդ օրէնքները ցոյց տուցին հակառակը:

Պատժված հրէականութիւնը կրաւաւ, ոչնչացաւ, որպէս օրգանական մարմին, իսկ նրա մերժված նոր վարդապետութիւնը խաչելութիւնից յարուցված էր, բայց յարուցված էր թէ մեռցրեց քրիստոնէութիւնը, խաչելով նրա հեղինակին.— բայց պատմութեան աւնորդ օրէնքները ցոյց տուցին հակառակը: Պատժված հրէականութիւնը կրաւաւ, ոչնչացաւ, որպէս օրգանական մարմին, իսկ նրա մերժված նոր վարդապետութիւնը խաչելութիւնից յարուցված էր, բայց յարուցված էր թէ մեռցրեց քրիստոնէութիւնը, խաչելով նրա հեղինակին.— բայց պատմութեան աւնորդ օրէնքները ցոյց տուցին հակառակը: Պատժված հրէականութիւնը կրաւաւ, ոչնչացաւ, որպէս օրգանական մարմին, իսկ նրա մերժված նոր վարդապետութիւնը խաչելութիւնից յարուցված էր, բայց յարուցված էր թէ մեռցրեց քրիստոնէութիւնը, խաչելով նրա հեղինակին.— բայց պատմութեան աւնորդ օրէնքները ցոյց տուցին հակառակը:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Սիրանոյց»: Գրեց Սիրանի Տիւսար. Կ. Պոլիս, տպար. Նանս Պէրպլեան, 1885: Ուսումնասիրում գինն է 2 բուբլ. 25 կ.:

Հայ գրականական աշխարհը իրաւունք ունի պարծենալ, որ իր սակաւթիւ գործիչների շարքում կան և փափուկ սեռի ներկայացուցիչներ: Յառաջողութիւններն է, ի հարկէ, կը մը ամական մտղովորի տարիացած դառնց մի քանի անհասանք կարողանում են ոչ միայն տիրանալ մի յայտնի կրթութեան, այլ և նորը են ունենում իրանց մայրենի լեզուով հեղինակ դառնալ, այսինքն հրատարակող սովորացնել, կրթել, իդէալներ հանդիսանալ, հասարակական հարցեր յարուցանել:

Ռուս հռչակաւոր քննադատ Բէլինսկին շատ անպատկառ կարծիք ունի սուհասարակ կին հեղինակներին, կին բանաստեղծի մասին, հիմնվելով մտքով Սանդի վէպերի վրա: Սակայն նրանից յետոյ Եւրոպայի վիպական գրականութեան մէջ աշխատող տիկիններին և օրիորդներին թիւը աւելի և աւելի մեծացաւ, թէև հռչակաւոր քննադատի կարծիքը դուրս չը մնաց ճշմարտութիւնից, այն է թէ կինը չէ կարող ինքնուրոյն հանձար լինել, կինը պէտք է միայն ոգևորէ տղամարդին, օգնէ նրա հանձարի զարգացմանը, օժանդակի միջոց դառնալ մի օր և է հասարակային հարցի ժամանակ: Բայց ինչպէս որ լինի, կինը, շատ սեղևաբարձ դուրս գալով իր նեղ շրջանից, բարձրացնոց է, տուել մարդկօրէն գործելու եռանդն ու ըն-

դունակութիւնը. գուցէ հեռու չէ այն ժամանակը, երբ նա այնքան գոյեղացած կը լինի, որ հանձարներ էլ կը ծնենք իր սեռակիցների շրջանից: Ինչ որ անուարանալի է և մեր ժամանակներում, այն է, որ մարդու ընկերական և հասարակական կեցութեան մէջ կինն էլ ունի իր որոշ բաժնը, ունի իր մասնագիտութիւնը ճանաչել ու ընել իր սեռի գործառնութիւնը այնպիսի միջոցներով, որոնք գուցէ անմատչելի են տղամարդկին: Ահա այդ ստակալով հետաքրքիր են կանանց վէպերը: Կրանով մի համեմատական չափ է ներկայանում մարդու և կնոջ մի օր և է բանի մասին ունեցած հասկացողութիւնների մէջ: «Սիրանոյց»-ը, ուրեմն, արժանի է խորին ուշադրութեան, տեսնելը նրա բովանդակութիւնը, տեսնելը ինչպէս է տիկին Տիւսարը հասկանում իր սուսմնական շրջանը և ինչ ունի ստել նրա մասին:

Պ. Հայտնու հին ամիրայութեան մի անհետացող միջոց է: Նա ունի բաւականին մեծ հարստութիւն, մի չքնաղ, հրեշտակաբարդ կին, մի աղջկի, որ վէպի հերոսուհին է, որդեգրուհի Չարուհի անուամբ և մի անդգալ, կողմ սիրտ: Նրա անձնատրութեան մէջ կրկին և կրկին հանդիսանում է հայ ընտանիքի բուսակալը, նրա օրը սեղանը, նրա կեանքը մաշող անհոգի արարածը: «Տէր Աստուած, որքան սարսափելի հարցեր ունենք», բացականչում է ընթերցողը. «միթէ սա այսպէս է, մեր հայրերի մէջ էլ չը կայ մի լաւ մարդ»:—Ո՛չ, ոչ, պատասխանում են մեր վիպասանները, իսկ տիկին Տիւսար մի հատիկ լաւ հայր ցոյց տաւու համար ընթերցողին տանում է Հաւո... Մենք յոյս ունենք, որ երբ և իցե առիթ կուենանք ասպուցուցանել, որ այս լուրը հայրերը վիպաստագետ չլինու են, որ նրանք ստեղծվում են ըստ մեծի մասին միանման հետեղութիւնների, միմեանց նը-

մանկու. ստիտ չնորհու: Առ այժմ շարունակենք:

Հայտնու ընտանիքի մէջ բոյն է գրել երկնաւոր սէրը: Զարուհին սիրում է Հրանտին, իսկ Սիրանոյցը սիրում է Երուանդին, որ Զարուհու եղբայրն է: Եթէ դուք զեռ հասկացողութիւն չունիք վստի բանաստեղծական (և պէտք է ասել—միշտ երեակայական) սէրի մասին, որ միացած է շատ ցոյցիլ ընտելան, սովակներին, վարդենիներին, լուսնակին, հովիվի հետ, եթէ դուք չը դիտէք, թէ ինչպէս անմիտ, անգործ էակները սիրում են միմեանց, փափուկ են, ծիծաղում են, ինչ զգացմունքներով են ապրում, կարողացէք ուրեմն «Սիրանոյց»-ի այն գլուխները, ուր նկարագրված են Զարուհու երջանիկ հարսանիքը, ընտանեկան կեցուցը, Սիրանոյցի բաժանվելը Երուանդից, որը դէտում է Հաւո իր նկարչական արհեստը կատարելագործելու մտքով: Նրա գնալուց յետոյ մի պարտն, Գարեհեան տոնամանուով մի հարուստ պաշտօնեայ, ինդրում է Սիրանոյցի ձեռքը: Պ. Հայտնու մեծ գոհութեամբ ընդունում է այդ սուսարկութիւնը և երբ իմանում է, թէ իր աղջկից արդէն սիրում է մի արքատ փիլիսոփայ արհեստագործին, խիտտ բարկանում է: Մէջ է ընկնում տիկին Հայտնու, բայց սրա փիլիսոփայութիւններն էլ չեն կարողանում համոզել ասիացի բուսակալին: Ընտանեկան մի թունդ փոթորիկ ժամանակ Սիրանոյցը նուստում է. դրանից մայրը հիւանդանում է, տանով վերում անհարմար վայրեր:

«Մեր բոլոր մայրերը նահատակներ են», բացականչում է մի եւրոպայի հեղինակ... Բժիշկները համարեալ յուսահատվել են, բայց Սիրանոյցը վրձու է լոկ իր որդկական սիրով բժշկել նրան. հիւանդի անվաղի մօտ ծառայողութիւններ անելու նա հաստատ խօսք է ստալիս պ. Գարեհեանի կինը

մտալի հինի մէջ, որ մի ժամանակ նոյնպէս նոր էր, բայց որ արդէն հնացել, անպէտք էր դարձել, կորցրել էր իր ամեն կենսատու ոյժը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

«Մշակի»-ի 39 համարում վիճակային կոնսիտորիայ կարգավոր երգուեալ փաստաբան պ. Սենեքերիմ Արծրունու նամակը, որով 'ի միջի այլոց ցոյց տալով իւր տանն և հինգ տարուայ փաստաբանական գործունէութիւնը յօգուտ եկեղեցական կալուածների, թիւլ է տալիս իրան մի քանի սխալներ անել կոնսիտորիայ յանձնուած գործերի պաշտպանութեան և իր այդ պաշտպանութիւնից հրաժարուելու առիթով:

Նախ սպորտն ստում է. պաշտպանել է եկեղեցական կալուածներ ս. Էջմիածնի և Երևանի ու Վրաստանի և խմբէթի և այլ վանքերի, և այդքան տարի աշխատելուց յետոյ ստիպուած էր հրաժարուել եկեղեցայ հաւատարմատարութիւնից գլխաւորապէս այն պատճառով, որ մեծ անդունդ երեաց իր և թեմակալ առաջնորդի հանդմանց մէջ: Թողնելով մի կողմն, իբրև իրան չը վերաբերեալ ինդիք, թէ ս. Էջմիածնի, Տաթևի և այլ գործերի պաշտպանութիւնից ուղղան տարի և ինչու համար հեռացած է պ. Արծրունին կոնսիտորիայ Վրաստանի և խմբէթի թեմի եկեղեցական կալուածների պաշտպանութիւնը պ. Արծրունու հետ կրած եռամեայ պայմանագրով լրանալուց յետոյ (1-ն յուլիսի 1884 թ.) հարկաւոր համարեց սբիլ փաստաբանի յանձնել թէպէտ և պ. Արծրունին շատ էր ցանկանում վերադառնալ նորոգել, որովհետև կոնսիտորիայի փաստաբանը ստանում է տարեկան ուճիկ 1200 բուբլ և գործերից դատարանական ծախք թէ արդարև պ. Արծրունին կամովին չէր ցանկանալ հրաժարուել այդ պաշտօնից, ասպացոյցանում է

դատնալ, որպէս դի ընտանեկան փոթորիկներ այլ ևս չը կրկնվեն: Տիկին Հայտնու ապաւինում է, լսում է աղջկայ հաստատ վճիռը, որ արդէն հասած լինելով պ. Հայտնու ակնաջին, շատ ուրախացրել է նրան: Խորազնին մայրը չէ հաւատում, որ աղջկից այդտեղ չէ կեղծում և մի դոհի ցանկութիւն չէ յայտնում. նա լաւ գիտէ, թէ ումին է պատկանում օրիորդի սիրտը և ինչով կարող է ապրել այդ սիրտը: Բայց ինչ և իցե, ամեն ինչ ըստ երեկոյթին հանդարտվում է. Գարեհեանի փառաւոր հարսանիքը մի իրողութիւն է դառնում Այնտեսես տիկին Գարեհեան, մեր այդ հրեշտակ Սիրանոյցը, տանջվում է. փառաւոր սպարաբի մէջ նրա սիրտը հեծում է, յիշելով սպարաբան սիրահարին: Ամուսնու ոսկին փայլում է նրա շուրջը, բայց նա զգում է անմխիթ միանակութիւն:

Պ. Գարեհեանը մի անուակ մարդ է, հրու երկրպագու մի ֆրանսիացի վաւաչու կնոջ: Ժանիթը— այսպէս էր սրա անունը— ի հարկէ, թշնամի է Սիրանոյցին, որ պիտի լալէ նրանից ոսկի դրպահաւոր Գարեհեանին: Սկսվում է մի զգուշիլ մըրցութիւն, որ բաւական պարզ է ցեխի մէջ ընկած կանանց վերաբերմամբ: Գարեհեանը շուտով էլ բռնվում է նրա ցանցի մէջ, կրկին սկսում է երկրպագել նրան: Բայց դա քիչ է մի փչացած հոգու համար: Կատարեալ յաղթութիւն ձեռք բերելը անկարելի է, մինչև որ անբարոյական Գարեհեանը չը տեսնէ իր հրեշտականման կնոջ մի տեղ գործը, որով կարողանայ դատապարտել, թերևս հեռացնել նրան: Այստեղ տիկին Տիւսարը վէպի մէջ նկատուի է մի հետաքրքրաշարժ նորութիւն, մի գեռու ևս քիչ յայտնի պատկեր: Այնու միայն, որ Գարեհեանի և Ժանիթի յարաբերութիւնները բաւականաչափ չեն լուսաբանված, վիպասանի դա-

14 26 36 08 99 26 36 08 14 26 36 08 99 26 36 08 14

տարուայ օրագրութիւնները քրքրելու, ենթադրու- լեալ ինչորևէ ընթացք տալու համար:

Հարկաւոր է իմանալ նոյնպէս, որ դպրանոցի ներկայ դրութիւնը նիւթական կողմից աննախնա- ձեւի լինելով, պէտք է ընտրել այնպիսի մարդիկ, որք թէ հասարակութեան և թէ բարձր, հոգևոր իշխանութեան առջև յարգանք վայելող լինելին, որպէս զի կարողանան դպրանոցի նիւթական մասը բարելոյն, որից կախված է և ուսման մա- սի բարելոյն:

Թող լաւ հասկանայ Երևանի հասարակութիւնը, որ եթէ թեմ, դպրանոցի այժմեան 7,000 բարձրի- չայի տարեկան մուտքը չը բարձրանայ դոնէ մինչև 10,000 բարձրու տարեկան գումարը, նա չէ կարող իր նպատակին և սանձամբին հասնել, իսկ դորան հասնելու համար պէտք է ընտրել հոգևոր բարձրութեան պաշտօնի համար ձեռնհաս մարդիկ:

Բանար

ՆԵՐՈՒՆ ԼՈՒՐՆՐ

Մեզ գրում են ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԽՍԻՑ, որ մար- տի 26-ին այդտեղ տեղի ունեցաւ հետեւեւ ցաւալի ղէպը: Ընդհու ազգայնիք, ինչպէս ասում են, վաղուց միմեանց դէմ քէն ունեւելոյ այդ օրը մի չնչին պատճառով կուսի են բռնվել, որի ժամա- նակ կուսակցութիւնը մէջը իր լսանշարը խրել է միւսի կուսիքի մէջ: Վերաբար վաճառ մի անվան և կազմութեամբ զօրեղ մարդ է, իսկ յանցաւորը համեմատաբար մի թղուկ: Քաղաքային բժիշկը վէրքը քննելուց յետոյ, ծանր գտաւ նրան և վի- ռաւորակ մի դրութիւնը վտանգաւոր: Յանցաւորը բռնված է և ուղարկված է Օրդուբաթ, դաւաւա- պետի աւագ օգնականի մօտ: Այս ղէպը ակնքի էլ աչքի է ընկնում, որովհետև յատկաւարանակ էլ հայերի մէջ այս տեսակ յանցանքները շատ սակաւ են պատահում: Սակայն տեղիս թուրքերի մէջ այդ տեսակ ղէպը պատահում են:

Ով որ ճանաչում է Զանգեզուրի գաւառի հայ ընկերներին, գրում են մեզ ԳՕՐԻՍ զիւղից, կը համարվի որ այստեղի հայերը շատ ընդունակ են ամեն տեսակ վատ յատկութիւններ ընդունելու: Բայց ամենին աշխատասէր չեն և արհամարհում են արհեստները, զիւղատեսակական աշխատանք և այլն: Քանի որ մեր հարեան թուրքը դորդեր և շապիւր է պատրաստում, իսկ հեռու հիւսիսից ե- կած մաշական աղանդաւորը մեր հարուստ երկրի ընդթիւնից, որպէս ժիր երկարործ և տնտես, օգուտ է քաղում, զանգեզուրից հայը, զարունը բացվելուն պէս, թողնում է իր տուն ու տեղը, սազը ձեռնի, այլիւր հաւաքելով սկսում է պե- տել համարեա ամբողջ կովկասում: Զանգեզուր-

ցին սիրում է վիճել, դատ բանալ հարեանի դէմ, ուրիշին մեղաւել, և այլն: Զանգեզուրցի հայը այն- քան սիրում է դատ ու դատաստանական գան- դատ, որ տեղիս հայերի մասին մի անկողտ են պատմում որ շատ յատկանիշ է զանգեզուրցուն: Մի օր մի զանգեզուրցի Դուշուց գալով մեծ ճա- նապարհին պատահմամբ մի ծրար է գտնոււմ. բա- ցում է և մէջը բաւական մեծ դուստրի թղթա- դրամ տեսնելով, անբաւական իր զրտով բարկու- թեամբ բացականչում է. «անիծված ապրանք, ինչ պիտի անեմ այդ փողի հետ... այնքան ու- ռախ էի, կարծելով դա մ'ազալի թողով (դա տատանական դանդաղ) կը լինի ծրարի մէջ»:

ՎԱՂԱՐՍՏԱՍՏԻՑ մեզ գրում են: «Յայտնի է որ հայոց դպրոցները մի հաստատ, որոշ ուսու- մնական պրօգրամ կրէք չեն ունեցել, որով ա- ուսչնորդվելին մեր բոլոր կարգի դպրոցները: Այ- ժմ, ինչպէս լսում ենք, կաթողիկոսը հրամայել է մշակել ուսումնարանների համար մի ուսումնա- կան պրօգրամ, և այդ ծրագիրը, որպէս պրօէկտ, պէտք է ի հարկէ, օրէնքի հիման վրա, ներկայաց- նի բարձր կառավարութեան հայեցողութեանն ու հաստատութեանը: Այժմ, ինչպէս լսում է, այդ պրօէկտը մշակում են մեր յայտնի մանկավարժ, Մանդինեանց, ճեմարանի տեսուչ Խօսթրօլի հետ, պ. պ. Բալասանի և Արշակ Նահապետեանի ա- ջակցութեամբ: Գրանք մի տեսակ ուսումնական յանձնաժողով են կազմում Մեքորթը եպիսկոպոս Սմբատեանցի նախագահութեամբ: Թէ և վերոյի- չեալ անձնաւորութիւնները յայտնի են իրանց մանկավարժական հմտութիւններով, այնու ամե- պրօէկտը մշակելու միջոցին, նախ քան ներկայաց- նին օրինական հաստատութեանը, ինչպէս ասում են ամեն ուրիշ հասարակական հաստատութիւն- ները, ծանօթացնելին իրանց պրօէկտի հետ և հասարակութիւնը մեր մասնով միջոցով, որպէս զի իր կողմից մասնին էլ իր կարծիքը կարողա- նար յայտնել: Ամեն պրօէկտ, որ դեռ ևս մշակ- վում է և դեռ ներկայացրած չէ կառավարութեա- նը ու հաստատված չէ նրանից, մասնուր օրէնքով կատարեալ իրաւունք ունի քննապատել: Գիցողը հոգևոր իշխանութիւնը դիտարկութիւն ունի մի նոր դպրոց բանալ մի օր է և հայաբնակ քաղա- յում: Պարզ է, որ ինչպէս ամեն հաստատութիւն նա էլ պէտք է խնդրի թղթաւորութեան կառավա- րութիւնից, բայց մինչև նոր դպրոցի պրօգրամի հաստատվելը, ինչի հոգևոր իշխանութիւնը չէ յանձնում մասնին իր հիմնվելի դպրոցի կանո- նադրութեան ծրագիրը քննելու»:

Չատկի տօների ժամանակ մեք ուղում էինք

«Մշակի» մի համար միայն չը հրատարակել, այն է երկըւարթի օր, 15 ապրիլի, բայց սովորեցանք երկու համարը չը հրատարակել մեր գրաշարնե- րին պատահած զբոսընթեան պատճառով: Մեր զլխաւոր գրաշարը և իր եղբայրը կորցրին երկու շաբաթվայ ընթացքում թէ իրանց եղբորը որ նոյնպէս գրաշար էր նոյն սուպարանում և թէ ի- րանց հորը:

Շնորհակալութեամբ ստացանք ՄՕՍԿԱՅԻՑ պ. Պարոնթեանից նրա մի նոր երաժշտական հեղի- նակութիւն պիւնսի համար «Кавказский Марш» վերնագրով երկու հայոց յայտնի եղանակների վրա հիմնված. «Միւստա Մարաշ» և «Մեզ նոր արև ծագէ»: Այդ երաժշտական պիւնսայի գինը 60 կոպէկ է և դա մեր երիտասարդ երաժշտի չոր- բորդ հեղինակութիւնն է:

Այս օրերս մեք առիթ ունեցանք այցելել ԹԻՖԼԻՍԻ կենդանանոցը: Թէ և զգանները բազ- մաթիւ չեն, բայց վատ ն մ ու չ ն եր չեն և լաւ են պահված ու առողջ են: Մեր աչքի առջև կենդա- նանոցի տէրը ձեռք էր տալիս աւելւծի, պանտերայի և դայլի վանդակներին, ձեռքով շօշափում և փայ- փայտում էր այդ վայրենի զագաններին, ինչպէս ընտանի կենդանիներին: Ամեն օր 4 ժամին կէս- րից յետոյ բոլոր կենդանիներին կերակուր են տալիս, իսկ բոս օձը ուսում է միայն երեք ա- միս մի անգամ: Այս օրերս կենդանանոցն այցե- լեցին և Վեհանիները հովանաւորութեան» Թիֆ- լիսի ընկերութեան անդամները և խօսակցութեան մէջ յանդիմանեցին կենդանանոցի տիրոջ որ սա իր բոս օձին կենդանիներին, որոնց մորթում և կերակու- րում: Կենդանանոցի տէրը նկատեց անասնա- սէր պարոններին որ իրանք էլ թող օրինակ ցոյց տան ու հրաժարվեն ոչխարներ, հորթեր, հաւեր և այլ կենդանիներ մորթելուց և ուտելուց: Իսկ բոս օձը անհարին է ուրիշ կերպ պահել, եթէ նրան չը կերակուրէ կենդանի ճագարներով, քանի որ այդ անագին օձը մորթված կենդանիներ չէ ուտում: Եւ ճշմարիտ, մարդկանց և բոս օձի մէջ այն զանազա- նութիւնը կայ, որ առաջինները ուտում են ամեն տեսակ անմեղ կենդանիներին, որոնց մորթում և եփում, կամ խորովում է իրանց խոհարարը, իսկ բոս օձը ոչ խոհարարի, և ոչ էլ խոհանոցի մէջ պէտք է ունի, այլ սովորութիւն ունի կենդա- նի անասուններին սազ սազ կուլ տալու: Ա- սում են որ անասնաւոր պարոնները վերաբարկ- լով կենդանանոցի տիրոջ նկատողութիւնը, ան- միջպալէս պրօ օ տ օ կ օ (արձանագրութիւն) կազ- մեցին նրա սասած խօսքերի մասին, որպէս զի այդ վերաբարկ խօսքերը պարունակող պրօտօկո- լը ներկայացնեն ընկերութեան ընդհանուր ժողո-

վին: Նրեում է ճշմարիտ, որ կան մարդիկ, որոնց բան ու գործը կարծել է, որ այդ տեսակ անմիտ բաներով են զբաղվում:

Շնորհակալութեամբ ստացանք ԹԻՖԼԻՍԻ Ման- կարձական դպրոցի կառավարչի պ. բժիշկ Ար- տէմիեւի կողմից ներկայ 1886 թ.ին Թիֆլիսում (Մէլքովի տպարանում) տպված «Научный Ве- стник врачей Закавказья. Повивальн. Института» վերնագրով գիրքը: Այդ հատորը բացի բժշկական այլ և այլ յօդուածներէր և Մանկարձական դպր- րոցի դրութեան նկարագրութիւնից, պարունա- կում է իր մէջ բժիշկ Վ. Կրուչենյուեւի կողմ- ված պրօգրամը (ծրագիրը) հարցական կէտերով Անդրկովկասում ընակող գանազան ազգերի մէջ հետեւեւ անհրաժեշտ տեղեկութիւններ հաւաքե- լու համար: «Տեղեկութիւններ անդրկովկասեան գա- նական ազգերի մէջ կանանց դաշտանի, յղու- թեան, ծննդականութեան, յետածնաբանական գրու- թեան մասին և նոյնպէս այդ ազգերի մէջ նորա- ծին մանկանց պահպանութեան մասին»: Այդ ծը- րագիրը իր հարցական կէտերով տպված է երեք լեզուներով. ուսուերեն, վրացերեն և հայերեն: Ի- դուով: Արհեստ միայն որ հայերեն բաժինը շատ անգրազէտ կերպով է թարգմանված և մանաւանդ շատ վատ սրբագրված, ուրեմն ընթերցողի հա- մար տեղտեղ բողբոլին անհասկանալի: Այդ պիտով ինչ օգուտ կարող են տալ այդ անգրա- ղէտ ձեռք խմբագրված և անձուռնի կերպով սըր- բագրված հարցական կէտերը: Միթէ Թիֆլիսում չը զանվեցաւ մի գրագէտ հայ բժիշկ, կամ մի ու- սուցիչ որ պ. Կրուչենյուեւին իր յօդուածը օ- րինաւոր կերպով թարգմանէր: Բայց առհասարակ ամբողջ գիրքը գեղեցիկ և օգուտեւ գիրք է:

Սպանդար Սպանդարեան պատասխանել է «Մշակի» ֆելիետոնիստ Արիստոս: Այդ պարոնի լօգիկան այս է. «Մշակը» կամ Գրիգոր Արծրունի իրաւունք չունեն յարձակվել նոյն իսկ հանաբով այնպիսի բարձր անձնաւորութեան վրա, ինչ- պէս ամբողջ Թիֆլիսի յայտնի Մէլքիսէդէկ (Կա- ռեգին) Մուրադեանն է, իսկ Սպանդար Սպան- դարեան ի հարկէ իրաւունք ունի արմինների ըն- թացումը ի ձեռքբերով ցեղն հաւաքել և թախել այդ ցեղը Ներսէսի և Երիմեանի պէս անձնաւոր- ութիւնների երեսին, այնպիսի անձնաւորութիւն- ների, որոնք, կարծում ենք, փոքր ինչ աւելի յար- գելի են և աւելի արժանաւորութիւններ ունեն քան թէ Մուրադեան: Մի բան ստատիկ հա-ւանեցիւնք Սպանդարեանի պատասխանի մէջ, այդ նրա անասելի վրեղանունն է, որ Արիստոս նրա, Սպանդարեանի գրուածներն է ընծայում Մէլքիսէդէկին: Սպանդարեան ուրեմն սկամայ

բայն չարիքով է արծարծուած, քան առաջինը: Ընդհարական կարգերի դատապարտութիւնը կարող էր աւելի խորագրաց լինել, եթէ պ. Գարեհեանի անձնաւորութիւնը անհաստական երեսիթների կար- ված չը լինէր: Միթէ մի կնոջ և մի ամուսնու մէջ միայն սիրային յարաբերութիւնն է կենդանի, միթէ չը կան ուրիշ տեսակ յարաբերութիւններ և, որոնք աւելի ծանրակշիւր նշանակութիւն ու- նենային, քան թէ սէրը: Մէքը մի պայմանական հասկացողութիւն է անհաստեղի մէջ. և սէրը դեռ չէ կարող դատապարտել մէկին, արդարայնեւ միւսին:

«Սիրանոյշի» համառօտ բովանդակութիւնը ձե- աւակարգել կարող է ընթերցողը, կարգաւոր վէպի յուսալաւանքը, որ գրուում է 8 1/2 երես և բացա- արում է վէպի նպատակը, գործող անձինքների այս և այն տեսակ գործունէութիւնների պատճա- ուր:

Վէպ և բացատրող յուսալաւան... այս երկուքը միմեանց հետ չեն հաշվում: Վէպը բացատրու- թիւնների կարօտ չէ, վէպի բացատրութիւնը ինքը վէպն է, իսկ վիպասանը անպատճառ պարտաւոր չէ ամեն մէկին հասկացնել իր ձգտումները, վի- պասանը մինչև անգամ պարտաւոր չէ վիպասա- ըանել թէ սրբան ճիշտ է իր յայտնած գաղափա- րը. նա փիլիսոփայ չէ, նա մանրագիտիկ խոզար- կու չէ, նա պատկերացող է, գաղափար արծար- ծող է: Ընթերցողին է մնում գտնել մանրամաս- նութիւնները, կշռել ամենը իր սեփական գի- տակցութեամբ: Անմոռաց են մնում վէպի այն հերոսները, որոնց ամբողջ պատկերները ինքն ըն- թերցողն է գտնում մտածելու և բոլոր տարրեր մտքերը վերակշռելու միջոցով: Բաւական չէ, որ «Սիրանոյշի» ընթերցողը մտածելու շատ աննշան նիւթ ունի, նրան դեռ ևս բացատրում են թէ ինչ է այս և ինչ է այն: Ո՛չ, այդ տեսակ ան-

չնորք յուշարարութիւնները հեռի պիտի մնան: «Սիրանոյշի», ինչպէս նկատեց ընթերցողը, սկզբից մինչև վերջը հիմնված է սէրի վրա: Ինչ- պէս Լամարթիւնը իր «Ռաֆայէլին» մէջ և Ս. Պիե- րը իր «Պաղտոս և Վերգիլիէն» մէջ, տիկին Տիւսարը դնում է կեանքի մէջ միայն այն, որի ստուերն ենք տեսնում մեր շուրջը. դա վերացական հրեշտա- կային սէրն է, այդ իղէալական գաղափարը, որ, ինչպէս յայտնի է, կարող է կատարեալ լինել միայն հրեշտակների մէջ, և ոչ թէ մեր զԺողակ աշխարհում, ուր չարն ու բարին միասին հարեա- նութիւն են անում, ըստ երեսիթին բաւական հաշտ կերպով: Գործող անձինքները անարիւն հո- ղիներ են երևում. ամեն տեղ գեղեցկութիւն, ա- մեն տեղ զարգարանք, փայլ, վայելուչ մարտու- թիւն, ամեն տեղ փափուկ զգացմունք, ծայրահեղ անձնաբանական համարող կրթեք—ասա ինչ ենք գտնում «Սիրանոյշի» մէջ: Որոշակի դժագրուած տիպեր չը կան, դրանց տեղ գրուած են միայն ստուերային օրինակներ: Նոյն իսկ Գարեհեանի պէս մի մարդու ընաւորութիւնը, որ մեծացած է ստոր շողաբորթների մէջ, որի թրեքը սովորել են ապ- ընլ անասակութեան թոյնների խոզիչ հոտերի մէջ, մի այդ տեսակ մարդու ընաւորութիւնը բա-ւական թոյլ է դուրս բերած. այդ մարդը չունի հաստատ դէմք, չունի իր ինքնությունը դրոյթեան անհրաժեշտ պարագայը: Այդպէս է և վերջին ամբարները մէկը, պ. Հայրապետ. սա մի շատ հե- տաքրքիր անձնաւորութիւն է. բայց նրա մասին մի բան դիտելը միայն.—նա իր կարողացաւ հաս- տատել թէ որն է իր դաւակնի ճշմարիտ բարդը: Տիկին Հայրապետ մի չարիքանց բարդաւոր երեւ- կայութեան ծնունդ է. նա սիրում է սողկանը, շատ շուտ հիւանդանում է, դիւրագրաց է մի է- լեքտրական մագնիսի պէս: Սիրանոյշը մի հազ- աղիւս հրեշտակ է, որ այնուամենայնիւ մեռնում

է: Երեւանը արտի աշխու զգացմունքները մար- մնացած պատկերն է. բայց որքան թուլամորթ, որքան անկարող: Կարծես, նա արիւն չունի, հայ չէ ուտում. նրա լեզուն բացվում է Սիրանոյշի դիակի մօտ միայն, պ. Հայրապետին նա ասում է. «Հայը բարբարոս և մեծամիտ, ահա արած գործը»: Անձ քաջութիւնը Երևակայեցեք, ընթերցող, թէ ինչպէս կը լինէր աշխարհը, եթէ այդ տեսակ մարդկանցով լցուած լինէր և դուք միշտ լսելիք թտտեղական բացականչութիւններ. «հրեշտակը իմ», «ո՛վ երկնային էակ», «ո՛վ կորուսեալ հրեշ- տակ» և այլն: Չէ որ շատ կը ճանձրանայիք:

Տիկին Տիւսար, իբրև հայութեան շրջանի մի զե- ղեցիկ բացաւորութիւն, իբրև լեղակազէտ հեղինակ, շատ յարգելի է մեզ համար. մեք պատուում ենք նրա ծանր ու ողորկ լեզուն, ընդհանուր գրիչը, աշխոյժը: Արիստո միայն, որ յարգելի տիկինը յա- փշտակող է և մտածում է թէ ինչպէս կարել- թտակէ ընթերցողին, այդ պատճառով նա լարուած է ընկնում: Օրինակ, խառվայում Երեւանը դը- նում է Ժուլիայի դերկումանի վրա ծագիչ վրձնը գնել: Նկարագրում է գերեզմանատան անուելի տեսքը միմեծ ժամանակը. «...Այլալեւալ երեւա- կայութիւնը կը կարծէ յայնժամ թէ ամեն մի վէպ շարժուն ստուեր մ'է որ յաւիտենականութիւնը գլխում վերս բերելով մահուն անթախանցելի զգացումը յայտնելու կը յուսալաւանք, որով մար- մինը ակամայ սարսուտ մի կունենայ, և սիրտը օձգիլն բարձրում մի» (Եր. 206): Նոյն Երեւան- ըը Սիրանոյշի այգում Քրանսիացի սրկիպիլից վէպը և պ. Գարեհեանից անպատուութիւն ստանալուց յետոյ նաւալով դնում է իր քրոջ տունը: Նկա- րագրում է Մարմարայի այն ախը, ուր թաղված են Ղլիովի պատերազմում ընկած անդիւայեք, հե- ղինակը պատմում է թէ ինչպէս է կուլում տաճիկը,

Քրանսիացին, անդիւայեքին, կարծես այդ պատու- թիւններով ընթերցողի առաջ պատկերացաւ Մար- մարան, կարծես Ղլիովի պատերազմը որ է և կապ ունի Երեւանի և Սիրանոյշի սիրային դրամայի հետ: Ինչպէս է կուլում տաճիկը.—Ներք ամեն երկրային նկատմունք կը դադրի ի մարդ, գրեթէ գերբնական էակ մի կը լլայ նա. ու կը մեռնի պա- տերազմի դաշտին վայր ախիոյթ իր մարմնին տառապանաց, որ վերայ, մարտիրոսի մը ոյժը կը զգայ, և կը կարծէ յաւիտենական վայելքը ճաշա- կել երկրէն իսկ» (Եր. 310): Այդ բառերի կուտա- կումը, այդ ճայթող պերճախօսութիւնը երևում է ամեն մի էջի մէջ և շատ վատ տպագրութիւն է գործում, կաշկանդելով միջոց ու մտածողութիւ- նը: Գեղարուեստը չը պէտք է որոնել մեծածախ զարդարուն շրջանակի մէջ կուտած խայտաճա- մուկ գոյները մէջ. ընական հասարակ ու անպա- ճայճ պարզութիւնը գեղարուեստի իսկական ծը- նարանն է:

Մեծահատոր վէպ հրատարակելը պարծանքի ա- ռարկայ չէ. փոքրիկ գործերն էլ շատ գեղեցկու- թիւններ են կարողանում բովանդակել իրանց մէջ: Անշուշտ Պրօշեանցի «Կուսաճաղիկը» շատ հետաքրքրութեամբ և անորժանքով կը կարդա- ցուէր, եթէ նրա միջին դուրս ձգվելին անհամար մանրամասնութիւնները, որոնք գուռով կապուած են բուն առարկայի հետ: Անշուշտ «Սիրանոյշը» մի լաւ սիրային վէպի կը լինէր, եթէ նրա մէջ չը լինէին այդքան անլիւր զանազանութիւններ, վե- րև յիշուածների պէս նկարագրութիւններ, թտա- րօնական մենախօսութիւններ, ծանր ու բարակ փիլիսոփայութիւններ: Ամեն մէկին մեծ մեծ գոր- ձեր տեղեկելու տաղանդը չէ չնորհած: Ահա ինչ կը կարող ստել տիկին Սիրանոյշի Տիւսարին, յար- գելով նրա բոլոր ընդունակութիւնները:

խոստովանվում է որ ոչինչ այնքան վերաբերիչ է...

«Հիւսիսային գործակալութեան հեռագիրները...

Հնորհակալութեամբ ստացանք բժշկական ՇԸԸ...

Հրատարակիցեալ «Ազգի» ամսագրի սպրիլի...

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ մեղ հեռագրում է «Հիւսիսային...

Մեղ հեռագրում են և հետեւեալը: «Արաբները...

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ մեղ հեռագրում է «Հիւսիսային...

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ մեղ հեռագրում է «Հիւսիսային...

Ապրիլի 10-ին, ինչպէս մեղ հաղորդում է հեռագիրը...

Այսօր ՄՐՈՍԿԱՅ Լազարեան ձեռնարանը տունում...

Մինչ ինչեցինք «Մշակի» նախընթաց համարում...

Մինչ ինչեցինք «Մշակի» նախընթաց համարում...

Մինչ ինչեցինք «Մշակի» նախընթաց համարում...

ման է հանդուցեալին: Գրքովը նկարագրում է...

«Հիւսիսային գործակալութեան» հեռագրում է...

ՍՕՖԻԱ, 14 ապրիլի: Տեղեկ չըզմաննրում...

ԱՌԻՆԻ, 14 ապրիլի: Տեղեկ չըզմաննրում...

ՍՕՖԻԱ, 14 ապրիլի: Տեղեկ չըզմաննրում...

ըրում պետութիւնները լիովնում են Յունաստանի...

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՅ ԲՈՐՈՍԱ Ապրիլի 16-ին

Ռուսաց 1 րուր լ օրոյնի վրա արժէ 23 3/4 պէս

Ռուսաց 2 րուր լ օրոյնի վրա արժէ 20 1/2 պէս

Ռուսաց 3 րուր լ օրոյնի վրա արժէ 17 1/2 պէս

Ռուսաց 4 րուր լ օրոյնի վրա արժէ 14 1/2 պէս

Ռուսաց 5 րուր լ օրոյնի վրա արժէ 11 1/2 պէս

Ռուսաց 6 րուր լ օրոյնի վրա արժէ 8 1/2 պէս

Ռուսաց 7 րուր լ օրոյնի վրա արժէ 5 1/2 պէս

Ռուսաց 8 րուր լ օրոյնի վրա արժէ 2 1/2 պէս

Ռուսաց 9 րուր լ օրոյնի վրա արժէ 0 1/2 պէս

Ռուսաց 10 րուր լ օրոյնի վրա արժէ 0 պէս

Ռուսաց 11 րուր լ օրոյնի վրա արժէ 0 պէս

Ռուսաց 12 րուր լ օրոյնի վրա արժէ 0 պէս

Ռուսաց 13 րուր լ օրոյնի վրա արժէ 0 պէս

Նոր կոնսուլդատ փոխառութիւն. 155 > — >

5 1/2 0 զրուական թղթեր կալուած. 158 > 62 >

5 1/2 0 զրուական թղթեր խնամքի կալուած. 101 > 37 >

6 0 զրուական թղթ. խնամքի կալ. բան. 101 > 25 >

Վ. օրժակ-կամակի բանակի ակցիաները 525 > — >

Ռուսաց Երկաթուղիների գլխաւ. ընկ. 252 > 50 >

Ռուսաց Կապիտալի ընկ. 87 > 50 >

Ս. Պետերբուրգի քաղաքային օրլի-գացիաներ. 91 > 62 >

Մոսկուայի քաղաք. օրլի-գացիաներ . 92 > 50 >

Օրէսայի 93 > 75 >

Ս. Պետերբուրգի բոլորայի տրամադրութիւնը շատ ամուր է

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Ս. ՍՈՒՆ Ե ԸՆԿ. (II. 4857.) 8—50 (4)

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԻ Գանձն է առնում թարգմանել ֆրանսերէնից...

ՅԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽՍԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ. (N. PAQUET ET COM.)

Գօլօվինսկի պրոս. վրա, Չիթախովի տանը, Մուրիկային ընկերութեան տակը...

Էլեգիա-Melange. Մազերի արագ և առատ բուսացնելու համար...

Կարմրադեղ—Eugénie. Տեղեկ, թուշերին և ականջներին բնական վարդի գոյն տալու...

Իսկական «Pasta Eugénie», գերազանց միջոց կաշու ամեն տեսակ բծերի, և երեսի վրա պատահող ուրիշ անարագ երևոյթների դէմ: Տալիս է երեսի գոյնին երկուստեքողական թարմութիւն...